# ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

27 մայիսի 2020 թվականի թիվ 48-Ա
ք. Երևան

## «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի, 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերության ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2020 թվականի մայիսի 21-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. Բավարարել «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստածրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2020թ. մայիսի 27
ք. Երևան

Հավելված
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2020 թվականի մայիսի 27-ի թիվ 48-Ա որոշման

| Հեռուստածրագրի անվանումը | Թույլտվության ժամկետի ավարտը |
|---|---|
| «Иллюзион+HD» | 31.12.2021թ. |
| «Ювелирочка»<br>«НТВ права»<br>«НТВ сериал» | 31.12.2021թ. |
| «TV 1000»<br>«ТВ 1000. Русское Кино»<br>«TV 1000 Action»<br>«Viasat Explorer»<br>«Viasat History»<br>«Viasat Nature»<br>«Viasat  Sport»<br>«Телеканал Да Винчи» | 30.04.2022թ. |
| «Точка отрыва» | անժամկետ |